Կայնել ես վարդի հովին

Կայնել ես վարդի հովին, վարդի հովին, հովին,
Քամին տա կրծքիդ մովին, կրծքիդ մովին, կրծքիդ մովին,
Երեսիդ շողին մեռնեմ, շողին մեռնեմ, շողին,
Աչքերիդ կապույտ ծովին, կապույտ ծովին, կապույտ ծովին:

Սև ամպը սարի գլխին, սարի գլխին, գլխին,
Կաքավը քարի գլխին, քարի գլխին, քարի գլխին,
Չէ՞, իրար խոսք ենք տվել, խոսք ենք տվել, տվել,
Էն բարձր սարի գլխին, սարի գլխին, սարի գլխին:

Խնձոր ես՝ ծառի վրա, ծառի վրա, վրա,
Ծաղիկ ես՝ սարի վրա, սարի վրա, սարի վրա,
Անուշ տաղ ասող կաքավ, ասող կաքավ, կաքավ,
Կանգնել ես քարի վրա, քարի վրա, քարի վրա: